

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/63-2024

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-
ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ
ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

14 մարտի 2024 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

ՀՀ փոխվարչապետ (խորհրդի նախագահ)

Տ. Խաչատրյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար

Գ. Սանոսյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարի տեղակալ

Ք. Ղալեյան

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Տ. Գաբրիելյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ն. Տերյան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Կարապետյան

Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

Ա. Գուգարաց

Երևանի քաղաքապետի տեղակալ

Լ. Հովհաննիսյան

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի
ղեկավար

Ա. Աղիլխանյան

«Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր
տնօրեն

Գ. Ավետիսյան

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ա. Հարությունյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ

Ն. Զուլայան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ

Կ. Բաղայան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի խորհրդական

Տ. Ասատրյան

Օրակարգային 1-ին հարց՝ «Քաջարանի թունելի կառուցման» ծրագրի Գնումների պլանի և Քաջարանի մոտ 7 կմ թունելի կառուցման և մոտ 4 կմ մոտեցող ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման մրցութային գործընթացի վերաբերյալ

Որոշվեց՝

1. Հաստատել «Քաջարանի թունելի կառուցման Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք ներդրումային (Տրանշ 4)» ծրագրի Գնումների Պլանը:
2. Հաստատել «Քաջարանի թունելի կառուցման Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք ներդրումային (Տրանշ 4)» ծրագրի շրջանակներում Քաջարանի մոտ 7 կմ թունելի կառուցման և մոտ 4 կմ մոտեցող ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ ձեռքբերման տեխնիկական առաջադրանքը և հրավերը և Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամին մրցութային գործընթացը սկսել Եվրասիական կայունացման եւ զարգացման հիմնադրամի վերջնական հաստատումները ստանալուց անմիջապես հետո:

Օրակարգային 2-րդ հարց՝ ԵՆԲ ֆինանսավորմամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3-ի շրջանակներում 2021թ-ի հունիսի 25-ի թիվ T3-QCBS-01 խորհրդատվական ծառայությունների պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ

Որոշվեց՝

1. Հաստատել ԵՆԲ ֆինանսավորմամբ իրականացվող իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3-ի շրջանակներում 2021թ-ի հունիսի 25-ի թիվ T3-QCBS-01 խորհրդատվական ծառայությունների պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ թիվ 4 համաձայնագիրը:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գ.Ավետիսյանին՝ գործող կարգին համապատասխան «ԱյԱրԴի Ինժեներինգ» Ս.Բ.Լ. հետ սեղմ ժամկետում ստորագրել 2021թ-ի հունիսի 25-ի թիվ T3-QCBS-01 խորհրդատվական ծառայությունների պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ թիվ 4 համաձայնագիրը:

Օրակարգային 3-րդ հարց՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր 4-ի Սիսիան-Քաջարան կմ 0+000- կմ 60+022 հատվածի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթի նախաորակավորման փուլի չեղարկման վերաբերյալ

Որոշվեց՝

1. Չեղարկել Սիսիան-Քաջարան կմ 0+000- կմ 60+022 ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթային գործընթացի նախաորակավորման փուլը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ